Internet Society
Armenia Chapter

Ինտերնետ հասարակության Հայաստան հատված

2018-2019թթ.. Գործունեության զեկույց

Մեր առաքելությունը

- Խթանել և աջակցել ինտերնետի զարգացմանը Հայաստանի Հանրապետությունում՝ ի շահ հայաստյան հասարակության:

Մեր անդամները

- Ներկայումս մենք ունենք 45 ակտիվ անդամ

Մեր խորհուրդը

- Մենք ունենք խորհրդի 9 անդամ

Մեր աուդիտորները

- Մենք ունենք 3 աուդիտոր

Մեր գործունեությունը

Իր առաքելությանը հասնելու համար կազմակերպությունը՝

- հայ ինտերնետային համայնքին ներկայացնում է ինտերնետում նոր տեխնոլոգիական նվաճումները և օգնում դրանց ներմուծմանը,
- ինտերնետ տեխնոլոգիաներ է տրամադրում բնակչության անապահով խավերին, ներառյալ կույր և տեսողական խնդիրներ, հաշմանդամություն ունեցող անձանց, թոշակառու մարզիկներին, թոշակառուներին և գյուղական դպրոցներին ու գրադարաններին: Այս նպատակին հասնելու համար, ԻՀՀՀ-ն հենվում է Ինտերնետային հասարակության դրամաշնորհների և Հայաստանի Ինտերնետային ռեգիստրի ֆինանսական օժանդակության վրա, որը նման օգնությունը համարում է որպես իր սոցիալական պարտավորություն:

Հաշվետու ժամանակահատվածում (2018-2019) ԻՀՀՀ-ն իրականացրել է իր առաքելությանը համապատասխան մի շարք ծրագրեր:

2018

Իրականացված նախագծեր

Հանդիպումների/կոնֆերանսների մասնակցություն

Օժանդակություն կույր և տեսողական խնդիրներ ունեցող մարդկանց համար

ԻՀՀՀ-ն շարունակում է իր աջակցությունը Կույր և տեսողական խնդիրներ ունեցող Մշակույթի պալատում համախմբված անձանց, որտեղ ԻՀՀՀ-ն ստեղծել էր ինտերնետ հասանելիության կենտրոն և ֆինանսական օժանդակություն տրամադրում համակարգչային մարզիչներին և Ռադիո-մենք (Ինտերնետային ռադիո տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար) ադմինիստրատորի պաշտոնների համար:

Համակարգիչներ, ծառայություններ և W-Fi Ինտերնետ գյուղական գրադարանների համար

ԻՀՀՀ-ն դրամաշնորհ է ստացել «Համակարգիչներ, ծառայություններ և W-Fi Ինտերնետ գյուղական գրադարանների համար» նախագծի համար: Մշակվել են rural-libraries.am վեբկայքը և ֆեյսբուքյան էջը, որոնք մեծ տարածում են գտել:

- Գյուղական գրադարանների նախագծի մասին հոդվածը հրապարակվել է Ինտերնետ հասարակության պաշտոնական կայքում: https://www.internetsociety.org/blog/2018/12/helping-rural-libraries-in-armenia-to-embrace-the-digital-age/
- Դրամաշնորհի միջանկյալ և վերջնական զեկույցները հրապարակվել են այստեղ՝ https://chronicle.isocchapter.am/publ/interim_report.pdf https://chronicle.isocchapter.am/publ/Finalreport.pdf

Իրերի Ինտերնետ (IoT) դասընթաց

ԻՀՀՀ-ն ստացել է դրամաշնորհ «Chapterton 2018» ծրագրի շրջանակում «IoT դասընթաց ուղղված Arduino վերահսկիչների կիրառմանը» նախագծին:

Chapterthon 2018-ի զեկույցը կարելի է գտնել այստեղ՝
https://www.youtube.com/watch?v=1ZXZR64YOHY&feature=youtu.be



Աղջիկները ՏՀՏ ոլորտում

ԻՀՀՀ-ի խորհրդի նախագահ Լիաննա Գալստյանի նախաձեռնությամբ կազմակերպությունը միացավ Հեռահաղորդակցման միջազգային միության (ITU) գլոբալ միջոցառմանը՝ աղջիկներին ՏՀՏ-ում ներգրավելու և աջակցելու համար: Խորհրդի փոխնախագահ Քրիստինա Բաբաջանյանը և անդամներ Վեսմիրա Հարությունյանը, Նարինե Դերձակյանը մասնակցեցին կազմակերպչական աշխատանքին:
Վիքիմեդիա Հայաստանի հետ համագործակցությամբ անցկացվեց սեմինար՝ սովորեցնելու աղջիկներին Վիքիպեդիայում հոդվածներ գրել: Այնուհետ կազմակերպվեց կլոր սեղան իրենց ոլորտում ՏՀՏ միջոցներով հաջողության հասած կանանց մասնակցությամբ, որոնք կիսվեցին իրենց փորձառությամբ:

ArmSIG (Ինտերնետ կառավարման հայկական դպրոց)

ԻՀՀՀ-ն համակազմակերպել է ԻԿ հայկական դպրոցի 2-րդ հոսքը, որը ընթանում էր շաբաթական մեկ անգամ 5 ամսվա ընթացքում:

ArmIGF (Հայկական Ինտերնետ կառավարման համաժողով)

ԻՀՀՀ-ն համակազմակերպել է 4րդ Հայկական Ինտերնետ կառավարման համաժողովը:

Համաշխարհային IGF

ԻՀՀՀ-ի խորհրդի նախագահ Լիաննա Գալստյանը կազմակերպության մի քանի անդամների հետ մասնակցել է Փարիզում կայացած IGF 2018 հանդիպմանը՝ ներկայացնելով ArmIGF-ը:

Համաժողով

ԻՀՀՀ-ի նախագահ Իգոր Մկրտումյանը մասնակցել է AGBU-ի և AVC-ի կողմից կազմակերպված «GIS համակարգը Հայաստանի դպրոցներում» համաժողովին:

Վրացական ԻԿՖ

ԻՀՀՀ-ի խորհրդի նախագահ Լիաննա Գալստյանը, խորհրդի անդամներ Անի Դալլաքյանը, Արմեն Մուրադյանը, Վահան Հովսեփյանը և մի քանի անդամներ մասնակցեցին Վրացական ԻԿՖ2018-ին:

2019

Իրականացված նախագծեր

Հանդիպումների/կոնֆերանսների մասնակցություն

Համակարգիչներ, ծառայություններ և W-Fi Ինտերնետ գյուղական գրադարանների համար

ԻՀՀՀ-ն շարունակում է դրամաշնորհային ծրագիրը, որի շրջանակներում համակարգիչներ և գրադարանի կառավարման ծրագրեր է տրամադրում գյուղական գրադարաններին:

Կոտայքի մարզ
Նորաշեն
Լեռնանիստ
Մարմառիկ
Մեղրաձոր
Զովունու գրադարաններ
Հրազդանի գրադարաններ 5, 7
Հրազդանի հեռուստակայանի գրադարան
Ազատամոտ

Գեղարքունիքի մարզ
Չկալովկա
Ծովաբեր
Լճաշեն
Ծաղկունք
Վարարս

Թավուշի մարզ
Չինարի
Ոսկևան
Դիլիջանի գրադարան թիվ 2,3

Վայոց Ձորի մարզ
Ձերմուկ

Ծրագրի ֆինանսական օժանդակությունը ապահովում է Հայաստանի Ինտերնետ Ռեգիստրը:

Գյուղական շրջաններում պակասում են SS գիտելիքներ ունեցող այն մարդիկ, որոնք կարող են լուծել ծրագրային և ապարատային խնդիրները: ԻՀՀՀ-ն կազմակերպել է հեռավար սպասարկման անվճար ծառայություն: Գրադարանները իրենց չաշխատող համակարգիչները ուղարկում են ծրագրի ղեկավար Վահան Միսակյանին, որը դրանք վերանորոգում և հետ է ուղարկում: Ծրագրային ապահովման խնդիրները լուծվում են Anydesk հեռավար ծառայության ծրագրի միջոցով:



Միայն վերջին 3 ամիսների ընթացքում.

- **Վերանորոգվել են 30 գյուղական գրադարանների համակարգիչներ**: Գրադարանները դրանք հանձնել են ծրագրի ղեկավար Վահան Միսակյանին, որը դրանք վերանորոգեց և հետ ուղարկեց:
- Anydesk հեռակառավարման ծրագրի միջոցով **սպասարկվել է շուրջ 60 համակարգիչ**: Դրանք ներառում են գրադարանի կառավարման ծրագրաշարի թարմացում և գրադարանների տվյալների շտեմարանների նորոգում:
- Կոտայքի մարզի գրադարաններում **վերանորոգվել են մի քանի WiFi երթուղիչներ**:

Հասանելիության սեմինար

ԻՀՀՀ-ն կազմակերպել է սեմինար հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրների վերաբերյալ, որոնք տեղի ունեցան ԻՀՀՀ-ի գրասենյակում: Ներկայացվեց 2018 թ. եվրոպական մի շարք երկրներում իրականացվող ծրագրերի վերաբերյալ «Զերո ծրագրի զեկույցը»: Քննարկումները շոշափում էին հաշմանդամություն ունեցող անձանց հասանեելիության խնդիրներին, հնարավոր լուծումներին, նրանց կյանքի դյուրինացմանը և հասարակությանը լիարժեք ինտեգրմանը: Որոշվեց, որ քննարկվող նախագծերը իրատեսական են Հայաստանում իրականացնելու համար:

Գնահատում

ԻՀՀՀ խորհրդի անդամները քննարկեցին Ինտերնետ հասարակության կողմից մշակված հատվածների գործունեության գնահատման չափանիշները: Անհրաժեշտ էր բավարարել և համապատասխանել այդ չափանիշներին Ինտերնետ հասարակությունում լավ գնահատական ստանալու համար:

Աղջիկները ՏՀՏ ոլորտում

ԻՀՀՀ խորհրդի նախագահ Լիաննա Գալստյանը կազմակերպեց տեղեկատվական սեմինար «Կիբերհիգիենան, կամ ինչպես կարելի է անվտանգ լինել Ինտերնետում» թեմայով: Սեմինարը տեղի ունեցավ ՀՀ Երևան քաղաքի թիվ 174 դպրոցում: Միջոցառմանը մասնակցեցին շուրջ 100 դպրոցականներ, նրանց մայրերն ու ուսուցիչները՝ տեղեկանալու ինտերնետի անվտանգության խնդիրներին և սկզբունքներին:

RINArmenia (Recursive Inter Network Architecture)

RINArmenia-ի հետ համագործակցությամբ՝ ԻՀՀՀ-ն մշակել է նոր նախագիծ և դիմել Ինտերնետ հասարակություն դրամաշնորհ ստանալու համար: Ծրագիրը նախատեսում է կազմակերպել դասընթացներ «Ռինայի ապագա ինտերնետի ներկայացումը» թեմայով: RINA-ն ցանցային նոր ճարտարապետություն է, որը նախատեսված է Ինտերնետի արագությանը, անվտանգությանը և կատարողականությանը բարձրացնել նոր մակարդակի: Այն գրեթե 10 տարվա հետազոտական ծրագիր է, որը ստեղծվել է ներկայիս ինտերնետի համահիմնադիրներ Ջոն Դիի, Լուի Պուզենի և այլոց կողմից:

«RINArmenia» նախագծի նպատակն է զարգացնել և իրականացնել տարբեր ոլորտներում Ապագա Ինտերնետի նոր մոդել՝ RINA տեխնոլոգիա՝ դարձնելով Հայաստանի Հանրապետությունը առաջին փորձագիտական կենտրոնը, որը զարգացնում և կիրառում է RINA տեխնոլոգիան ամբողջ երկրում:

Եվրոպական հատվածների հանդիպում

ԻՀՀՀ-ի խորհրդի անդամներ Անի Դալլաքյանը և Կարեն Երզնկանյանը մասնակցեցին Ինտերնետ հասարակության հատվածների 2019 կոնֆերանսին Բուխարեստում, Ռումինիա:



Անի Դալլաքյան, խորհրդի անդամ
Շնորհանդես| ԻՀՀՀ, նախագծեր, իրականացում և ապագա պլաներ

Կարեն Երզնկանյան, խորհրդի անդամ
Շնորհանդես | Իրերի Ինտերնետի նախագծերը Հայաստանում

Նորարար գրադարաններ 2019

ԻՀՀՀ անդամ Վահան Միսակյանը մասնակցեց «Նորարար գրադարաններ 2019» աշխատաժողովին իբրև խոսնակ՝ ներկայացնելով ԻՀՀՀ-ի գյուղական գրադարանների նախագիծը:

Ինտերնետ հասարակության տարածաշրջանային համայնքների ներգրավման գծով մենեջեր Նիք Հիրկան այցելել է Հայաստան և հանդիպումներ ունեցել ԻՀՀՀ-ի խորհրդի անդամների հետ ԻՀՀՀ-ի գրասենյակում: Նա նաև մասնակցել է .am տիրույթի 25-ամյակի տոնակատարությանը:

.am տիրույթի 25-ամյակի տոնակատարություն

ԻՀՀՀ-ն մասնակցեց **.am տիրույթի 25-ամյակի** տոնակատարությանը:

ArmSIG (Ինտերնետ կառավարման հայկական դպրոց)

ԻՀՀՀ-ն համակազմակերպել էր Ինտերնետ կառավարման հայկական դպրոցի 3-րդ հոսքը՝ Խորհրդի նախագահ Լիաննա Գալստյանի, խորհրդի անդամ Անի Դալլաքյանի, կազմակերպության անդամներ Քրիստինա Հակոբյանի, Սյուզան Մարուխյանի, Վեսմիրա Հարությունյանի և Նարինե Դերձակյանի ջանքերով:

ArmIGF (Հայկական Ինտերնետ կառավարման համաժողով)

ԻՀՀՀ-ն համակազմակերպել էր [5րդ Հայկական Ինտերնետ կառավարման համաժողովը]

Իգոր Մկրտումյան, ԻՀՀՀ նախագահ
Շնորհանդես | Chapterthon 2019 նախագիծը Հայաստանում

ArmIGF 5-ի կազմակերպող թիմ

Համընդհանուր ընդունման տեխնիկական դասընթաց

ԻՀՀՀ-ն Հայաստանի Ինտերնետ Ռեգիստրի հետ միասին Խորհրդի անդամ Աննա Կարախանյանի ջանքերով կազմակերպել էր Համընդհանուր Ընդունման (Universal Acceptance) տեխնիկական դասընթաց, որը վարեց նախաձեռնության տեխնիկական խմբի դեսպան Դուշան Ստոյիչևիչը:

Ինտերնետ գրագիտություն խոցելի խմբերի համար

ԻՀՀՀ-ն մշակեց «Ինտերնետ գրագիտություն խոցելի խմբերի համար» ծրագիրը, որի շրջանակներում խոցելի խմբերի համար նախատեսվում է բիզնեսի և Ինտերնետ գրագիտության դասընթացներ: Ծրագիրը ներկայացվեց Ինտերնետ հասարակություն՝ հաստատման համար:

«Beyond the Net» ծրագրի դրամաշնորհ

ԻՀՀՀ-ն ստացավ Ինտերնետ հասարակության «Beyond the Net Medium and Large Grants» ծրագրի դրամաշնորհը: Նախագիծը նվիրված է «Ինտերնետ գրագիտությանը խոցելի խմբերի համար»:

Վրացական IGF-ը և Համայնքային Կենտրոններ գագաթնաժողով

ԻՀՀՀ-ի նախագահ Իգոր Մկրտումյանը, խորհրդի անդամներ Վահան Հովսեփյանը, Արմեն Մուրադյանը, ԻՀՀՀ-ի անդամներ Քրիստինե Գյոնջյանը և Վալերի Ստեփանյանը նոյեմբերի 14-15-ին Թբիլիսիում մասնակցեցին Վրացական IGF-ին և Համայնքային Կենտրոններ գագաթնաժողովին:

Խորհրդի նիստեր

- Սահմանել կազմակերպության անդամների կողմից վճարման ենթակա տարեկան անդամավճարի չափը 1000 (մեկ հազար) ՀՀ դրամ: Ինչպես նաև սահմանել, որ կազմակերպության անդամը տարեկան անդամավճարը վճարում է՝
  - ✓ առաջին օրացույցային տարվա համար՝ Կազմակերպությանն անդամագրվելու օրվանից 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում,
  - ✓ երկրորդ և հետագա օրացույցային տարիների համար՝ մինչև տվյալ օրացույցային տարվա մարտի 31-ը ներառյալ,
  - ✓ կազմակերպության բանկային հաշվեհամարին փոխանցում կատարելու կամ առցանց եղանակով:
- Հաստատել կազմակերպության 2019 և 2020 թվականների գործողությունների ծրագիրը:
- Հավանություն տալ կազմակերպության 2019 թվականի գործունեության հաշվետվությանը:
- Առաջարկել ՀՀ Ինտերնետ կառավարման համաժողով միջգերատեսչական խմբին իր կազմում ներառել «Ինտերնետ հասարակության Հայաստան հատված» հասարակական կազմակերպությանը և որպես ԻՀՀՀ ՀԿ-ի ներկայացուցիչ առաջադրել ԻՀՀՀ ՀԿ-ի խորհրդի նախագահ Լիաննա Գալստյանին:
- Սահմանված ժամկետում և չափով տարեկան անդամավճարը չվճարելու համար Կազմակերպության անդամին հեռացնել կազմակերպությունից:

Խորհրդի նիստեր

2018-2019 թթ.ընթացքում Խորհուրդը բազմակի հանդիպումներ է ունեցել և սահմանել կամ որոշումներ ընդունել հետևյալի մասին.

- Կազմակերպության խորհրդի նախագահ ընտրել Կազմակերպության խորհրդի անդամ Լիաննա Գալստյանին, կազմակերպության խորհրդի փոխնախագահ ընտրել Կազմակերպության խորհրդի անդամ Քրիստինա Բաբաջանյանին:
- Սահմանել կազմակերպության նախագահ Իգոր Մկրտումյանի աշխատավարձի չափը: Լիազորել Կազմակերպության խորհրդի նախագահին՝ Կազմակերպության անունից ստորագրելու Կազմակերպության նախագահի հետ կնքվող աշխատանքային պայմանագիրը:
- Սահմանել կազմակերպության խորհրդի նիստերի անցկացման կարգը:
- Սահմանել կազմակերպության անդամների էթիկայի կանոնները:
- Սահմանել կազմակերպության խորհրդի անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման կարգը:

Միջոցառումների մասնակցություն

- Համայնքի վեբինար PIR / Ethos Capital / Ինտերնետ հասարակություն
- InterCommunity 2018, 2019
- Գործունեության գնահատման չափանիշներ Ինտերնետ հասարակության հատվածների համար
- Ինչպես պատրաստել հաջող տեսահոլովակ Chapterthon 2019 նախագծի համար
- Եվրոպական հատվածների եռամսակային հեռահանդիպումներ
- Ինտերնետ հասարակության համայնքների հետ հեռահանդիպումներ
- Ինտերնետ հասարակության Խորհրդատվական հանձնաժողովի պարբերական հեռահանդիպումներ (Լիաննա Գալստյան՝ որպես հայկական հատվածի ներկայացուցիչ)

Ինտերնետ հասարակության հատվածների գործունեության գնահատման արդյունքում ԻՀՀՀ-ն ստացավ ամենաբարձր դասակարգումը՝ **GigaBadge**